ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 218-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԻ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» (ՋՈԾԲ/WISE) ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ և 16-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև կնքված «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» վարկային համաձայնագրի 2-րդ հավելվածի 1-ին բաժնի «Ա» կետի 2-րդ ենթակետն ու «Առդիր» հավելվածի 1-ին բաժնի 35-րդ կետը՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի, Զարգացման ֆրանսիական գործակալության և Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր» (ՋՈԾԲ/WISE) ծրագրի իրականացման նպատակով՝

1) ստեղծել կառավարման խորհուրդ և հաստատել դրա կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հաստատել կառավարման խորհրդի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Կառավարման խորհրդի նախագահին՝ յուրաքանչյուր կիսամյակ Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել տեղեկատվություն՝ աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ